ՀՀ նախագահի ՆՀ-1063 հրամանագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին հրամանագիրը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 116-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը վերանվանել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն։

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն վերակազմավորման ձևով վերակազմակերպել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության։

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» ՆՀ-1063 հրամանագրի՝

1) I բաժնի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«10. Մշակույթի նախարարություն».

2) I բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 19.1-րդ կետով՝
«19.1. Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն».

3) II բաժնի 9.1-րդ կետն ուժը կորցրած ճանաչել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

2007թ. հունիսի 08
Երեւան